ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2015Թ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԱՅԱՆԵ ՍԱՅԱԴՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ

28.08.2015թ.

Մեծարգո մարզպետ, հարգարժան հյուրեր, սիրելի գործընկերներ

2014-2015 ուսումնական տարում Արմավիրի մարզի կրթության համակարգը հաջողությամբ կատարել է իր առաքելությունը մատաղ սերնդի կրթության և դաստիրակության կազմակերպման ազգանվեր գործում:

Մարզի հանրակրթական դպրոցներում ապահովվել է կրթական պետական ծրագրերի լիարժեք իրականացումը, կազմակերպվել է մի շարք հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրումը:

Անցած ուսումնական տարում գործել են մարզային ենթակայության

- 91 միջնակարգ,
- 21 հիմնական, և
- 2 հատուկ դպրոցներ:
- Քաղաքային և գյուղական **65 մանկապարտեզ,** որոնցում գործել են **189 խումբ՝ 5317 երեխաներով**:
- Մարզի դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը 2014թ. սեպտեմբերին կազմել է 30539, որից 3338-ը՝ առաջին դասարանցիներ:
- Այս ուսումնական տարում մարզի դպրոցների աշակերտների թիվը կկազմի 31080 , որից 3725 առաջին դասարանցիներ:
- 2015 թվականին 1734 աշակերտներ ստացել են միջնակարգ կրթություն, հիմնական դպրոցներն են ավարտել 1340 աշակերտներ, ովքեր համալրելու են ավագ դպրոցները և այլ ուսումնական հաստատություններ:
- 2014-2015 ուսումնական տարում գերազանց առաջադիմություն է ցուցաբերել 4875 աշակերտ, գերազանցության նմուշի հիմնական կրթության վկայական է ստացել 46 շրջանավարտ:

- Մարզից պետական բուհական ընդունելության քննությունների արդյունքում շուրջ 568 շրջանավարտներ ընդունվել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:
- Մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդել է 3276 ուսուցիչ, որոնցից 9-ը ստացել են տարակարգ:
- Ատեստավորվել են 471 ուսուցիչներ, 2015 թվականին վերապատրաստվել են ևս 428 ուսուցիչներ, որոնց ատեստավորումից հետո կավարտվի ատեստավորման հնգամյա ծրագիրը:
- Մարզում իրականացվել են <<Կրթության որակ և համապատասխանություն>> ծրագրի շրջանակներում նախադպրոցական կրթության միկրոծրագրեր 34 դպրոցներում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կնքված հուշագրերի համաձան մարզում կրթական տարբեր ծրագրեր են իրականցվել <<Պատանեկան նվաճումներ>> հասարակական կազմակերպության կողմից:
- Հուշագրի շրջանակներում <<Կրթություն Հայաստան>> ծրագրի շահառու հանդիսացող 5 երիտասարդ մասնագետներ աշխատանքի են տեղավորվել մարզի տարբեր դպրոցներում:

Մարզի դպրոցները համագործակցում են տարբեր միջազգային կազմակերպությունների և բազմաթիվ կրթական ծրագրերի հետ:

- Սարդարապատի միջնակարգ դպրոցը ստացել է <<Գերմաներեն լեզվի դիպլոմի դպրոց>> կարգավիճակ՝ A2 B1 մակարդակների ծրագրով:
- Հանրակրթության ոլորտի զարգացման ներկա փուլում հանրակրթական դպրոցների վարկանիշավորման իրականացման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր՝ պայմանավորված դպրոցների գործունեությունն ըստ իրական արդյունքների գնահատման անհրաժեշտությամբ: Մարզի դպրոցների վարկանիշավորման արդյունքները գոհացնող չեն, բացառությամբ Այգեկի միջնակարգ դպրոցի, որը ''Գյուղական մեծ և միջին դպրոցներ'' անվանացանկում զբաղեցել է 3-րդ տեղը: Մարզի մյուս դպրոցների ցածր միավորները վարկանիշավորման աղյուսակներում գրանցվել են դպրոցների տնօրինության կողմից վարկանիշավորման գործընթացին ոչ համապատասխան մոտեցման հետևանքով, որը, հուսով եմ, այս տարի դրական փոփոխություն կկրի:
- ՀՀ Արմավիրի մարզպետի 23.02.2015թ. N 39 որոշմամբ ստեղծված կազմկոմիտեն և առարկայական հանձնաժողովները 16 առարկաներից անցկացրել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը:

Տարածքային փուլը հաղթահարած 120 դպրոցի 515 աշակերտ մարզային հանձնաժողովի կողմից հնարավորություն է ստացել մասնակցելու օլիմպիադայի մարզային փուլին, որի արդյունքում 72 աշակերտ երաշխավորվել է մասնակցելու հանրապետական փուլին:

Հանրապետական կազմկոմիտեի կողմից առաջին կարգի դիպլոմով պարգևատրվել է Արգավանդի միջնակարգ դպրոցի աշակերտ Դավիթ Ղուկասյանը, երրորդ կարգի դիպլոմով՝ 10 աշակերտ, գովասանագրերով՝ 12 աշակերտ:

Լավագույն արդյունքներ են ցուցաբերել Վաղարշապատի N 9 հիմնական, Արգավանդի, Ալաշկերտի, Պտղունքի, Հայթաղի, Գրիբոյեդովի, Բամբակաշատի, Մուսալեռի, Ջանֆիդայի, Մրգաշատի N 1, Արշալույսի միջնակարգ, Էօռնեկյանի անվան, Վաղարշապատի N 5, Վաղարշապատի N 2, Արմավիրի N 4 ավագ դպրոցների աշակերտները:

Մարզի դպրոցականները ակտիվ մասնակցություն են ունեցել <<Կենգուրու>> միջազգային մաթեմատիկական օլիմպիադային, <<Մեղու>>՝ հայոց լեզվի և <<Ռուսական արջուկ>>՝ ռուսաց լեզվի հանրապետական օլիմպիադաներին՝ արժանանալով առաջին և երկրորդ կարգի մրցանակների:

Մարզի դպրոցականների մասնակցությամբ կազմակերպվել են երգի, ասմունքի, ընթերցանության մրցույթներ, որոնց ընթացքում հայտնաբերվել են մարզի շնորհալի և տաղանդավոր երեխաները:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մրցաշարեր, առաջնություններ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր:

2014-2015 թվականների ընթացքում սակայն մեր բոլոր մրջոցառումների կարևորագույն մասն են կազմել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված տարբեր ծրագրերը: Մարզի բոլոր ուսումնական հաստատությունները կազմակերպել են միջոցառումներ և ակտիվորեն մասնակցել համապետական և մարզային ծրագրերին:

Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոցի երգչախումբը երրորդ տարին անընդմեջ առաջին մրցանակի է արժանացել <<Երգող Հայաստան>> մանկապատանեկան երգչախմբերի 7-րդ հանրապետական մրցույթ-փառատոնում, իսկ նույն դպրոցի աշակերտներ Բարսեղ Աթանյանն ու Շանթ Սարգսյանը <<Ամենախելացին>> հեռուստամրցույթի եզրափակիչ փուլի հաղթողներն են:

Դպրոցական օլիմպիադաների և բոլոր մրցույթի հանրապետական փուլի մրցանակակիր երեխաները ամեն տարի մարզպետարանի՝ անձամբ մարզպետի կողմից խրախուսվել են պատվոգրերով և թանկարժեք նվերներով:

2015 թվականի մրցանակակիրների պարգևատրման միջոցառումը կանցկացվի նոր ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթաքում:

- Ներառական կրթություն են իրականացրել 4 դպրոցներ՝ 131 երեխաների համար: Նախատեսվում է առաջիկա ուսումնական տարում մարզի 19 դպրոցներում հատուկ կրթական կարիքներ ունեցող նախնական տվյալներով 740 երեխաների համար ևս ստեղծել համապատասխան պայմաններ և ապահովել նրանց ինտեգրումը աշակերտական հանրությանը:
- Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային կառույցների հետ համագործակցությամբ աշխատանքներ են տարվել իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող անչափահաս երեխաների և նրանց ընտանիքների հետ: Իրականացված աշխատանքների արդյունքում 18 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 27 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, իսկ 2 անչափահաս տեղավորվել է Վարդաշենի թիվ 1 դպրոցում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից 2014 թվականին իրականացված տեսչավորման արդյունքում մարզի հանրակրթական դպրոցներում արձանագրված խախտումների, բացթողումների և թերությունների վերացման նպատակով տրվել են հանձնարարականներ դպրոցների տնօրեններին, ըստ հնարավորի շտկելու թերությունները:
- Մարզում կազմակերպվել է մրցույթների մարզային փուլը <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Լավագույն ուսուցիչ>> և <<Լավագույն դաստիարակ>> անվանակարգերում, հաղթող են ճանաչվել Գետաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Գևորգ Մուքոյանը, Արմավիրի N 5 հիմնական դպրոցի ուսուցիչ Արմինե Վարդանյանը, Հովտամեջի միջնակարգ դպրոցի նախակրթարանի դաստիարակ Թեհմինե Անդրեասյանը:

- 2014-2015 ուսումնական տարում ևս 4 դպրոցներում սահմանված կարգին համապատասխան պատրաստվել են զենքի պահպանման սենյակները, միացվել պահպանման ձայնաազդանշանային համակարգերը: Ներկայում մարզի 95 դպրոցներ ապահովված են ուսումնական զենքով:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում մարզի դպրոցները համալրվել են համակարգիչներով, դիդակտիկ նյութերով և ուսումնական գրականությամբ, վերանորոգվել և կահավորվել են լաբորատորիաներ, մարզադահլիճներ, շախմատ և ռազմագիտություն առարկաների կաբինետներ:

- Ձևավորվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների 2015-2016 ուսումնական տարվա 1-12-րդ դասարանների դասագրքերի պատվերի հայտը (104216 դասագիրք), որով ամբողջությամբ ապահովվում է մարզի դպրոցների պահանջարկը: Արդեն ստացվել է առաջիկա ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասագրքերի ամբողջ քանակը, որ բաշխումը ընթացքի մեջ է: Մտահոգության տեղիք է տալիս վարձավճարների հավաքագրման կարգապահությունը, որի մասին են խոսում մարզի վճարման բացասական ցուցանիշները: (Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել վարձավճարների մուծման ժամկետների վրա):
- Մարզի բոլոր դպրոցներում ձևավորվել և գործում են դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդները, որոնք ակտիվ մասնակցում են դպրոցի կյանքին, իրենց ներդրումն են ունենում դպրոցի նյութատեխնիկական բազայի ամրապնդման, բարեկարգման, աշակերտների ժամանցի և հանգստի կազմակերպման աշխատանքներում:
- Որպես նորարարական նախաձեռնություն Արմավիրի մարզպետի որոշմամբ կազմակերպվել և ընթացքի մեջ է <<Տարվա լավագույն դպրոց>> մարզային մրցույթը, որի արդյունքները կամփոփվեն նոյեմբեր ամսին:

- Կազմակերպվել է մարզի անապահով ընտանիքների 300 դպրոցահասակ երեխաների հանգիստը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում՝ պետական բյուջեի միջոցներով: Ավելի քան 250 երեխաներ հանգստացել են Սևանի, Դիլիջանի, Արզնիի ճամբարներում՝ Արմավիր, Էջմիածին և Մեծամոր համայնքների և հասարակական կազմակերպությունների միջոցներով:

- ‘‘Դպրոցական սնունդ’’ ծրագրում ընդգրկված են 39 դպրոցներ, տարրական դասարանների 5685 աշակերտներով: Նոր ուումնական տարում ևս 36 դպրոցներ կմիանան ծրագրին:
- 2015թ. Տարեկան աշխատանքային պլանով մարզի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների համար նախատեսված է 1,081,508.0 հազ. դրամ: Այդ միջոցներով իրականացվել է 1 դպրոցի և 2 մանկապարտեզի վերակառուցում, 7 դպրոցի և 9 մանկապարտեզի վերանորոգում:

Ընթացքի մեջ են Նալբանդյանի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները:
Ամբողջությամբ վերանորոգվել է Գետաշենի միջնակարգ դպրոցի 2 մասնաշենքը, ևս մեկ մասնաշենք վերանորոգվել է մասնակի:
Անհատ բարերարի միջոցներում կառուցվում է Արևադաշտի միջնակարգ դպրոցի շենքը, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2015 թվականի հոկտեմբերին:
Համայնքային բյուջեի միջոցներով շուրջ 170,840.0 հազ. դրամի ծրագրեր են իրականացվել մանկապարտեզների շենքերի վերանորոգման, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման ուղղությամբ:

- Գազով լոկալ ջեռուցում ունեն մարզի 88, իսկ հեղուկ վառելիքով ջեռուցվում են 20, էլեկտրականությամբ՝ 6 դպրոցներ: Աշխատանքներ են կատարվում համայնքերի գազաֆիկացմանը զուգահեռ լոկալ ջեռուցմամբ ապահովել մարզի մյուս դպրոցները:
- Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընդունված նորմատիվ ակտերը ժամանակին տրվել են ուսումնական հաստատություններին, վերահսկվել է դրանց համապատասխան գործընթացների կազմակերպումը, պարտադիր կատարման հանձնարարականների անթերի կատարումը:

Ավարտելով խոսքս, բոլորիս մաղթում եմ քաջ առողջություն, անբասիր աշխատանք և հաջողություններ մեր կարևորագույն աշխատանքում:

Թող մեր դպրոցներում կրթվեն հայրենասեր, բանիմաց քաղաքացիներ, ովքեր կդառնան մեր հայրենիքի և պետականության կերտման մարտիկներն ու արժանապատիվ ապագայի երաշխավորները:

Շնորհավոր նոր ուսումնական տարի: